8912

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«09» 08 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 156-24

Նախաձեռնող՝ *«ՎՌ Արմենիան Ֆրութ» ՍՊԸ*
ք.Երևան, Գ. Հովսեփյան 20

Գործունեությունը՝ Սառնարանային տնտեսության կառուցում
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 156 - 24

«09» օգոստոս **2024թ.**

Սառնարանային տնտեսության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՎՌ Արմենիան Ֆրուտ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին համայնք Արագածավան բնակավայր

Ներածական մաս. Նախատեսվում է կառուցել սառնարանային պահեստային տարածք Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան գյուղի հողամաս 1 հասցեում: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է մոտակա բնակավայրի բնակելի շենքից 3 կմ, ճանապարհից՝ 38 մ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա) ենթակետի, հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել Արագածոտնի մարզի Թալին համայնքի կողմից 14.06.2023թ.-ին տրված N37 ճարտարապետահատակագծային առաջադրանքն ու 02-016-0250-0048 կադաստրային ծածկագրով N 21062023-02-0087 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը վարելահող, այլ հողատեսք, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների: Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Սառնարանային տնտեսությունում նախատեսվում է պահել ընկերության կողմից աճեցված մրգերը:

Նախատեսվող գործունեության կառուցապատման համար հատկացվող հողամասի չափը կազմում է 4.209 հա: Կառույցն իրենից ներկայացնում է 2 խոշոր, 2 միջին և ևս 5 կոնստրուկտորական լուծումներով բլոկների համադրություն:

Շենքում նախատեսված են 28 սառնարանային խցիկներ, յուրաքանչյուրը՝ 849 մ³ ծավալով:

Շենքի բոլոր կոնստրուկտիվ տարրերի կառուցապատման հատակագծային մակերեսը 0.00 նիշում 9740 մ է, որից 1950մ²-ն հովարային ծածկով կիսաբաց պահեստային տարածքն է:

Հողամասում կառուցապատման տոկոսը կազմում է 39.8 %, կանաչապատման տոկոսը՝ 60.2 % (25344 քմ):

Շենքի ճակատային արտաքին գումարային մակերեսը կազմում է 4500մ²: Շենքն իր մեջ ներառում է երկհարկանի գրասենյակային մասնաշենք՝ ընդհանուր 530 մ² մակերեսով:

Գլխավոր շինությունն իրենից ներկայացնում է միահարկ կառույց, որի հատակագծային ընդհանուր առանցքային չափերը կազմում են 100,0X14,0 մ: Կառույցը կարաններով բաժանված է 2 մասի: Շենքի հիմնակմախքն իրենից ներկայացնում է մետաղական սյուներից և ուղղաձիգ կապերից բաղկացած շրջանակային միահարկ համակարգ: Ծածկն իրենից ներկայացնում է հիմնական պարզունակների վրա հենված համակարգ: Տանիքը երկլանջ է, ջրահեռացումը կազմակերպված, ներքին: Կետային հիմքերը մետաղական սյուներին ամրակցվում են խարսխային հեղյուսների միջոցով, որոնք նախապես թողնվում են հիմքի մեջ: Արտաքին պատերը նախատեսված են ջերմա-ջրամեկուսացումով սալերից: Այլ օժանդակ շինությունները և գրասենյակային շինությունը նույնպես ունեն մետաղական հիմնակմախք:

Հատակները 0.00 նիշում նախատեսված են երկաթբետոնե սալ՝ տոպինգով, պատերը՝ սենդվիչ պանելներ, ֆասադային ապակիներ, միջնորմերը՝ սենդվիչ պանելներ, գիպսաստվարաթուղթ, ապակի, առաստաղը՝ սենդվիչ պանելներ, գրասենյակային մասնաշենքում երկաթբետոն: Արտաքին դռները և հրդեհային էվակուացիայի ճանապարհին գտնվող դռները հակահրդեհային են:

Սառեցման եղանակը ֆրեոնային է, կոմպրեսորները BITZER, SCH9583-210Y, օդամղիչները՝ Atlas Copco, սառեցնող ագրեգատները՝ Stefani SIDW50-5: Խցերում/սենյակներում աշխատանքային, ջերմաստիճանային ռեժիմները -5°C+5°C է: Էլեկտրականության ծախսը աշխատանքային 400 կվտ/ժամ, առավելագույնը 900 կվտ/ժամ է, տարեկան առավելագույն ծախսը՝ 1 100 000 կՎտ:

Շինության տանիքը լանջավոր է, ջրամեկուսացումն ու ջերմամեկուսացումը կազմակերպված սենդվիչ պանելների միջոցով, ջրահեռացումը կազմակերպված:

Բետոնը նախատեսվում է շինհրապարակ բերել պատրաստի վիճակում, բետոնատար ինքնաթափերի միջոցով՝ ավտոմատ բետոնաշաղախային հանգույցից: Շինարարության համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարումը կիրականացվի լիցենզավորված կազմակերպություններից:

Հողային աշխատանքների ժամանակ հանվելու է 420 մ³ հողի հանույթ, որից 80 մ³-ը հետլիցք է կատարվելու, մնացորդային 340 մ³ հողային զանգվածը Արագածավան համայնքի հետ համաձայնեցված կհեռացվի աղբավայր: Հողային աշխատանքների ժամանակ նախատեսվում է թրթուրավոր էքսկավատոր: Շինարարական աղբի ծավալը սպասվում է 75 խմ:

Շինարարության և շահագործման փուլերում խմելու, տնտեսական ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին պատկանող ջրամատակարարման ցանցից՝ պայմանագրային հիմունքներով: Ջրամատակարարման ներքին ցանցը փակուղային է, ներսում ջրագիծն իրականացվում է Φ 32-20 մմ տրամագծի ՊԷ եռակցվող խողովակներով:

Սառնարանային տնտեսության պահեստային հատակների սանիտարական լվացման աշխատանքները կկատարվեն հատուկ լվացման ավտոմատ մեքենաներով՝ բացառելով ջրահեռացումը դեպի կոյուղու համակարգ:

Շենքի կեղտաջրերի հեռացումը ինքնահոս կատարվելու է բակային ցանց, որտեղից 50 մ^3 ծավալով կոյուղու սեպտիկ հոր, որը պարբերաբար կմաքրվի հատուկ ծառայության միջոցով, պայմանագրային հիմունքներով:

Սառնարանային տնտեսության շահագործման փուլում՝ անձրևաջրերը տարածքից կազմակերպված ձևով կհեռացվեն 50 մ^3 ծավալով ավազան, որտեղ ինքնահոս կհավաքվեն հետագայում տարածքների ոռոգման նպատակով օգտագործելու նպատակով:

Ավտոմատ հակահրդեհային ցանցի դեպքում ներքին հակահրդեհային ցացը պետք է միացվի նախագծվող սպրինկլերային ջրով հրդեհաշիջման ցանցին:

Պոմպակայանում նախատեսված են 6 պոլիէթիլենային բաքեր, 10 մ^3 ծավալով, որոնք ապահովելու են խմելու ջրի պահուստային ծավալը:

Էլեկտրամատակարարումը՝ 0/4կՎ, ապահովվելու է 380/220վ տրանսֆորմատորային ենթակայանից: Տրանսֆորմատորային ենթակայանում, նախատեսված է նաև դիզել գեներատոր՝ որպես այլընտրանքային տարբերակ:

Պահեստային տարածքի համար նախատեսվում են ներածման և արտածման ռեկուպերացիոն համակարգ: Ջերմաստիճանային ռեժիմն ապահովվելու է մի շարք սարքերի համալիրով:

Շինարարության տևողությունը 18 ամիս է, այդ թվում՝ 1 ամիս նախապատրաստական աշխատանքների համար:

Սառնարանային տնտեսությունում շահագործման արդյունքում սննդային թափոններ չեն առաջանա, քանի որ պահվող մրգերի տեսակավորումից հետո սառնարանային տնտեսությունում չպահպանվող մրգերը, որոնք չեն ապահովի ապրանքային տեսքը, կտեղափոխվեն Արագածավան համայնքում առկա մրգերի վերամշակման արտադրամաս: Սառնարանում մրգերի ճիշտ պահման պայմանների ապահովման արդյունքում հնարավորինս կբացառվի օգտագործման համար ոչ պիտանի կամ որակազրկված մրգային թափոնների առաջացումը, իսկ առաջանալու դեպքում ընկերությունը այն կարող է տրամադրել՝ մրգային պյուրեի, մրգային օղիների, լավաշի, խնձորի չիպսի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների վերամշակման նպատակով:

Սառնարանային տնտեսության շահագործման փուլում սպասարկող անձնակազմի և աշխատողների կոմունալ, կենցաղային պայմանների ապահովման համար կկառուցվեն սանհանգույցներ, ցնցուղարան, հանդերձարան, ճաշարան, հանգստի սենյակ, ինչպես նաև տաք ջրի ապահովման համար տեղադրված կլինեն ջրատաքացուցիչներ: Ջեռուցումը նախատեսվում է ապահովել էլեկտրական տաքացուցիչների միջոցով:

Գործունեության տարածքում կամ հարակից տարածքներում բացակայում են աղբյուրներն ու մակերևութային ջրային ռեսուրսները:

Հողամասում որևէ արտադրական գործունեություն չի իրականացվել և այն աղտոտված չէ արտահոսքերով, թափոններով, կամ այլ վտանգավոր նյութերով:

Անմիջապես նախատեսվող գործունեության տարածքում հողաբուսական շերտը ավազակավի լցոնումով է, հողաբուսաշերտի հզորությունը՝ 0.0-0.2 մ է: Հողածածկի շերտի ծավալը միջինը 0.1 մ հզորությամբ կառուցապատվող հողամասում գնահատվել է 900 մ^3: Հանվող հողաբուսաշերտը նախատեսվում է պահել հատուկ միջոցառումներով, ապա օգտագործել հողամասում նախատեսվող կանաչապատման նպատակով:

Հաշվետվությունում եղած տեղեկատվության համաձայն՝ նախատեսվող տարածքում Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չկան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարական փոշեգոյացնող աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացվելու է ջրցան,
-մեքենասարքավորումների լիցքավորումը, քսայուղերի փոխումն իրականացվելու են մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները,
-շինարարական մեքենաների տեղաշարժը նախատեսվում է միայն գոյություն ունեցող, կամ միայն նշանակված ճանապարհներով,
- շինարարական նյութերի, քսայուղերի ժամանակավոր պահեստները նախատեսվում է ապահովել հոսակորուստների հավաքման համակարգով,
-քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում վերջիններս պահել հատուկ անթափանց, փակ տարաներում, հետագայում՝ որպես երկրորդային հումք, վերաօգտագործել կամ շինարարական այլ աշխատանքներում, կամ հանձնել վերամշակող կազմակերպություններին,
-շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումը,
-նախատեսվում է շինհրապարակը ցանկապատել և վերահսկել կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ,
-նախատեսվում է որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերաբար զննման աշխատանքներ,
անձնակազմը պետք է ապահովվի արտահագուստով և անհատական պաշտպանական միջոցներով,
շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ՝ ամիսը երկու անգամ հաճախականությամբ,
-շրջակա տարածքների հողային ծածկույթի մոնիթորինգ՝ ամիսը մեկ անգամ,
-կենսաբազմազանության մոնիթորինգ՝ շինարարության ժամանակահատվածում՝ ամիսը մեկ անգամ,
-տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
-աղմուկի և թրթռման մակարդակի չափումներ,

Նախատեսվում է կանաչապատման նպատակով իրականացնել սիզամարգի ցանքս: Կանաչապատման նպատակով օգտագործվելու են տարածաշրջանի բուսականությանը համապատասխան ծառեր և բուսատեսակներ: Կանաչապատման մակերեսը կազմելու է 60%:
Շահագործման փուլում իրականացվելու է սառնարանային տնտեսության և աշխատանքի վերահսկողություն և առաջացող տարբեր տեսակի թափոնների/ սառնարանում պահման համար ոչ պիտանի մրգեր, թղթից կամ պլաստիկ տարաներ պատշաճ հեռացում:
շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տրամադրել 200 000 ՀՀ դրամ:
Բնապահպանական միջոցառումների համար ընկերությունը նախատեսում է մասնահանել 3 900 000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի տարածքում Սառնարանային տնտեսության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները Արագածոտնի մարզպետարանը: Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել լրամշակված հաշվետվությունում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Շինաշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարելու դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական նորմերն ապահովելու նպատակով:
- Կառուցապատման գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- Շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրապարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (տարածքի ցանկապատում, շենքերի և շինությունների ծածկում համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով, օդերևութաբանական

անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում լրացուցիչ միջոցառումների իրականացում, շինաղբի և շինարարական նյութերի պահում և տեղափոխում անթափանց ծածկոցով և այլն),
- Բետոնի տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում բետոնի արտադրությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
-Շինարարության ընթացքում ապահովել աղմուկի մակարդակի վերահսկում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, երեկոյան ու գիշերային ժամերին դադարեցնել աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացումը:
-Անհրաժեշտ է իրականացնել շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի լվացում:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՎՌ Արմենիան Ֆրութ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սառնարանային տնտեսության կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական
կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան